

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 22-ի N 2 արձնագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԲՄԱՊՁԲ-25/150**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար շարժասանդուղքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԲՄԱՊՁԲ-25/150 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Գնման ընթացակարգի հրավերում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

Փոփոխության նկարագրություն: Տեխնիկական բնութագիրը անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ՝

«Նոր տեղադրվող շարժասանդուղքները պետք է համապատասխանեն «Շարժասանդուղքների կառուցվածքի և անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության» կոնոնների (որոշում N 1109-Ն առ 21.07.2022թ) և մետրոյում գործող այլ հրահանգների պահանջներին, նախատեսված լինեն տրանսպորտային հանգույցներում և մետրոներում (թունելներում) ծանր պայմաններում շահագործման համար: Շարժասանդուղքները նախատեսված են մետրոպոլիտենի կայարաններում տեղադրման համար՝ նորմատիվային ժամկետը անցած շարժասանդուղքների փոխարեն:

Շարժասանդուղքները պետք է համապատասխանեն.

1. EN115-1:2017 «Անվտանգության կանոնակարգեր շարժասանդուղքների և ուղևորների անցուղիների նախագծման և տեղադրման համար» պահանջներին:

2. «Էլեկտրական կայանքների կանոններ» (այսուհետ՝ ԷԿԿ) պահանջներին:

3. Շարժասանդուղքների կառավարման ավտոմատացված համակարգը պետք է համապատասխանի.

-«Շարժասանդուղքների ծառայության ավտոմատ կառավարման համակարգ» (այսուհետ՝ ԱԿՀ) տեխնիկական պահանջներին:

- «Տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայության և շարժասանդուղքների ծառայության տեխնիկական պահանջներին շարժասանդուղքների համալիրների կառավարման համակարգերին՝ հեռակառավարման համակարգերի և շարժասանդուղքի ծառայության ավտոմատ կառավարման համակարգերի հետ փոխգործակցության համար»:

Շարժասանդուղքների տեխնիկական բնութագրերը.

1. Վերելքի բարձրությունը – 16400 մմ:

2. Թեքության անկյունը՝ 30 աստիճան

- նախամուտքային հորիզոնական 2 (երկու) աստիճանով:

3. Թեք հատվածի ներքին տրամագիծը (կամ լայնությունը) – ըստ գծապատկերի

4. Շարժասանդուղքի հիմնական պարամետրերը պետք է համապատասխանեն EN115-1:2017-ի պահանջներին:

- Շարժասանդուղքի հիմնական չափերը պետք է համապատասխանեն EN115-1:2017-ի պահանջներին:

- Պետք է նախատեսված լինի մետրոպոլիտեններում և տրանսպորտային հանգույցներում, ծանր պայմաններում աշխատանքի համար՝ (որը կառաջարկի գործարանը) min 6000-7000 մ/ժամ արտադրողականությամբ

5. Ձգող շղթաների քայլը մինչև 200 մմ: Ձգող շղթաները պետք է ունենան հուսալիության համապատասխան չափաբաժին և որակի սերտիֆիկատ:

6. Օրական միջին աշխատանքային ժամանակը առնվազն 20 ժամ է:

7. Մեքենասրահում պետք է տեղադրված լինեն շարժասանդուղքի շարժիչը, շարժիչի տարրերի ապամոնտաժման և մոնտաժման համար նախատեսված ամբարձիչ սարքավորումները, էլեկտրական սարքավորումները, պահուստի ավտոմատ միացման, ղեկավարման և հեռակառավարման վահանները, եթե առաջարկվող մոդելը ունի առանձին շարժաբերային գոտի, առանձնացված շարժասանդուղքի կոնստրուկտիվ կառուցվածքից:

8. Հարակից շարժասանդուղքների զգված մասերի և դրանց ցանկապատերի միջև ընկած լայնությունը, ինչպես նաև եզրային շարժասանդուղքների կողային անցումների լայնությունը պետք է լինի առնվազն 500 մմ՝ առնվազն 1800 մմ բարձրությամբ:

Աշխատանքային պայմաններ, հուսալիության պահանջներ.

1. Շարժասանդուղքի ծառայության ժամկետը առնվազն 50 տարի (տրամադրվում է արտադրողի կողմից):

2. Շարժասանդուղքը նախատեսված է փակ տարածքում և տրանսպորտային հանգույցներում (միջին ծանրության շարժասանդուղքներ) աշխատելու համար, աշխատանքային ջերմաստիճանը սահմանված է մինուս 5 աստիճան ցելսիուսից մինչև պլյուս 40 աստիճան ցելսիուս:

3. Շարժասանդուղքի միջնորոգման վազքի ռեսուրսը հիմնանորոգումից առաջ պետք կազմի առնվազն 180000 կմ:

4. Կապիտալ վերանորոգման և միջին վերանորոգման միջև ռեսուրսը 90,000 կմ է:

5. Աստիճանների ծառայության ժամկետը պետք է լինի առնվազն 25 տարի (տրամադրվում է արտադրողի կողմից):

6. Սարքավորումների արտադրության ժամանակ պետք է պահպանվեն EN115-1:2017-ի պահանջները:

7. Շարժասանդուղքների մետաղակոնստրուկցիաները պետք է ունենան հակակոռոզիոն ծածկույթ, որը երաշխավորում է կոռոզիայի բացառումը ագրեսիվ միջավայրում մետաղա կոնստրուկցիաների ողջ ծառայության ընթացքում:

8. Շարժասանդուղքների կրող մետաղական կոնստրուկցիաների սեկցիաները պետք է ունենան 6 մ-ից ոչ ավելի երկարություն՝ կայարանում հեշտ տեղաշարժելու և տեղադրելու նպատակով:

Ապրանքի բաղադրիչներին ներկայացվող պահանջները.

Շարժաբեր

1. Շարժաբերը պետք է համապատասխանի EN115-1:2017 «Անվտանգության կանոնակարգեր շարժասանդուղքների և ուղևորների անցուղիների նախագծման և տեղադրման համար» պահանջներին:

2. Շարժասանդուղքը պետք է հագեցած լինի գլխավոր շարժաբերով, որը թույլ է տալիս շարժասանդուղքի մեկնարկը դեպի վեր ուղևորների առավելագույն ծանրաբեռնվածությամբ և օժանդակ շարժաբերով, որն ապահովում է աստիճանաժապավենի տեղաշարժը վերանորոգման արագությամբ (կամ հաճախականության նվազիչի միջոցով շարժաբերի արագությունը նվազեցնել մինչև աստիճանաժապավենի արագությունը դառնա 0,04 մ/վ):

3. Գլխավոր շարժաբերի ատամնանիվային փոխանցումատուփերում ատամի մակերեսային ծածկույթը պետք է լինի առնվազն 1,25 Ra սանդղակով:

Արգելակման համակարգ

1. Արգելակման համակարգը պետք է համապատասխանի EN115-1:2017-ի պահանջներին:

2. Արգելակման համակարգում պետք է օգտագործվեն միայն նորմալ փակ մեխանիկական արգելակներ (անընդհատ գործող մոմենտով):

3. Շարժասանդուղքը պետք է համալրված լինի բանվորական արգելակով (ԲԱ) և վթարային կամ օժանդակ արգելակով (ՎԱ): Վթարային արգելակը գործում է շահագործման կանոններով նախատեսված բոլոր դեպքերում:

Աստիճանաժապավեն

1. Աստիճանաժապավենը պետք է համապատասխանի EN115-1:2017-ի պահանջներին:

2. Աստիճանները պետք է ունենան հակակոռոզիոն պաշտպանություն ագրեսիվ խոնավությունից, որը ներթափանցում է շարժասանդուղքի վրա ուղևորների կոշիկներով:

3. Աստիճանի լայնությունը – 1000 մմ, պատրաստված չժանգոտվող պողպատից (սև գույնի) դեղին պլաստիկ կողային եզրերով և առաջնային սանրիկներով կամ գործարանի կողմից արտադրվող տեսակի:

4. Պետք է նախատեսվի այնպիսի սարք, որը թույլ չի տա սանդուղքի թեքվելը (քաշի շղթաների անհավասար ծգման դեպքում):

5. Աստիճանաժապավենի արագությունը՝ min 0,7 մ/վ, առավելագույնը՝ 0,75 մ/վ:

Զարդապատ

1. Զարդապատը պետք է համապատասխանի EN115-1:2017-ի պահանջներին:

2. Զարդապատի վահանների նյութը պետք է լինի փայլեցված չժանգոտվող պողպատ, առնվազն 1,5 մմ հաստությամբ:

3. Զարդապատի բարձրությունը 1000 մմ է: Նյութը՝ չժանգոտվող պողպատ:

4. Գոգնոցները պետք է ունենան հարմարավետ կարգաբերման հնարավորություն միջանցքների և սպասարկման տարածքների կողմից:

5. Աստիճաններին նայող զարդապատի գոգնոցների մակերեսը պետք է ունենա հակաշփման ծածկույթ՝ շփման ցածր գործակցով (ոչ ավելի, քան 0,45): Գոգնոցների վրա պետք է տեղադրված լինեն անվտանգության խոզանակներ:

6. Շարժասանդուղքների կամ շարժասանդուղքի և կայարանի պատի միջև գծապատկերում նշված համապատասխան լայնությամբ միջանկյալ զարդապատը պետք է պատվիրվի շարժասանդուղքի տեղակայումից հետո առկա չափերով, բոլոր 3 շարժասանդուղքների համար համապատասխան ամրացումներով:

Բազրեփոկ

1. Բազրեփոկը պետք է համապատասխանի EN115-1:2017-ի պահանջներին:

2. Բազրեփոկի ելանցքները պետք է ունենա արգելափակող սարք, որը գործարկվում է, երբ օտար առարկաները մտնում են բազրեփոկի տակ (եզրի և բազրեփոկի միջև), արագ վերականգնման հնարավորությամբ ուղևորատար տարածքից:

3. Բազրեփոկի ուղղորդիչը - չժանգոտվող պողպատ: Բազրեփոկը - փոկավոր, սև գույնի:

Էլեկտրասարքավորումներ

1. Կառավարման սարքերը պետք է համապատասխանեն EN115-1:2017-ի պահանջներին:

2. Շարժասանդուղքների ղեկավարման վահանները և բոլոր էլեկտրական սարքավորումները. շարժիչի կառավարման համակարգ, հաճախականության փոխարկիչ համակարգ (VVVF), կարգավորիչ (контролер), պետք է աշխատեն թունելային պայմաններում և մեկուսացված զրոյով կամ տեղակայել հավելյալ տրանսֆորմատոր զրո ստանալու համար:

- Շարժասանդուղքի ղեկավարման սխեմաները պետք է հագեցված լինեն «Էկոնոմ» և «Քնային» ռեժիմներով:

3. Շարժասանդուղքների էլեկտրական շարժիչը պետք է պատրաստված լինի ժամանակակից տարրերի բազայի վրա՝ օգտագործելով առաջատար արտադրողների սարքերը և նախատեսված լինի հաճախակի թողարկումների համար:

4. Շարժասանդուղքի ղեկավարման համակարգի բոլոր շղթաները պետք է ունենան ավտոմատ պահուստային շղթաներ: Թույլատրվում է փոխարինել պահուստայինը, բոլոր սարքավորումների և նրանց շղթաների ինքնաստուգումից հետո, շարքից դուրս եկած սարքերը պետք է ունենան օպերատիվ փոխարինման հնարավորություն:

5. Շարժասանդուղքը պետք է հագեցված լինի այնպիսի սարքավորումով, որը բացառում է ուղևորներով բեռնվածության շարժասանդուղքը միացնել ընտրված ուղղությամբ հակառակ ուղղությամբ, ցանկացած ղեկավարման վահանից և նույնիսկ շարժասանդուղքի հերթապահի կողմից: Այդ ժամանակ շարժասանդուղքի վերին և ներքին մուտքահարթակների մոտ գտնվող ղեկավարման վահանների և շարժասանդուղքի հերթապահի խցիկում պետք է նախատեսված լինի շարժասանդուղքի սկզբնական ընտրված աշխատանքային ուղղությունը ցույց տվող լուսային ազդանշան:

6. Էլեկտրոսարքավորումների, մալուխների մեկուսիչները և հաղորդալարերի մեկուսիչները պետք է պատրաստված լինեն հրդեհադիմացկուն նյութերից որոնք խոչնդոտում են հրդեհի տարածմանը:

7. Կառավարման համակարգը պետք է համապատասխանի ԱԿՀ ընդհանուր տեխնիկական պահանջներին և միացված լինի գործող համակարգին:

8. Շարժասանդուղքների ղեկավարման վահանների հավաքածուն (ՂՎ) պետք է ապահովված լինի էներգիայի պահուստային ավտոմատ միացում վահանով (ABP), երկու առանձին սնուցման աղբյուրներից միացնելու համար, որն ապահովում է էլեկտրաէներգիայով բոլոր ՂՎ -ը, հեռակառավարման համակարգը և երկու անկախ էներգիայի աղբյուրներից սնվող՝ վթարային արգելակը - 1 հատը ամբողջ համալիրի (կայարանի որից կսնվեն 3(երեք) շարժասանդուղքները) համար:

- յուրաքանչյուր շարժասանդուղքի վրա անհրաժեշտ է տեղադրել համապատասխան նոմինալի լարման էլ. կայունացուցիչներ (стабилизатор) (լարման անկումների և թռիչքների կայունացման և ՂՎ-ի հավելյալ պաշտպանություն ապահովելու նպատակով):

9. Շարժասանդուղքների էլեկտրական սարքավորումների պաշտպանվածության աստիճանը պինդ և հեղուկ մարմինների ներթափանցումից պետք է լինի առնվազն IP54:

10. Լարերը, միացումները, բոլոր սարքերը պետք է պիտակավորված լինեն:

11. Յուրաքանչյուր ՂՎ պետք է ապահովված լինի տեխնոլոգիական վարդակներով ~ 220 Վ և տեղային լուսավորությունով՝ 24 Վ:

12. Մասնակիցը պետք է փոխարինի յուրաքանչյուր շարժասանդուղքի մուտքահարթակի առջև արգելափակոցները (ծևը նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ, որոնք չեն խաթարի կայարանի արտաքին տեսքը և ուղևորների հարմարավետությունը, իրենց համապատասխան նշաններով):

Սպասարկման և վերանորոգման պահանջներ

1. Այն վայրերում, որտեղ անհրաժեշտ է ապահովել սպասարկվող սարքավորումների հասանելիությունը, զարդապատերի տարրերը պետք է շարժական լինեն:

2. Պետք է ունենա կարգաբերման հնարավորություն մետաղական ստրուկցիաների, աստիճանաժապավենի ուղղորդիչների, գոգնոցների, զարդապատերի գոտիներում:

3. Պահանջվող լուսավորությունը պետք է ապահովվի այն վայրերում, որտեղ ստուգվում են աստիճանավանդակը, քարշի շղթաները և ուղղորդիչների շարժական հատվածը:

Շարժասանդուղքի կառուցվածքը պետք է ապահովի:

1. Ծառայության հարմարավետություն և անվտանգություն:

2. Շարժասանդուղքների միջև ընկած միջանցքներում հանգույցների և մեխանիզմների շահագործման վերահսկման հեշտությունը:

3. Մեքենասրահից և շարժասանդուղքների միջև անցումներից շարժասանդուղքի բոլոր բլոկավորման սարքերին հասանելիության հեշտություն:

4. Բաղադրիչների վերանորոգման և փոխարինման հեշտություն:

Փաստաթղթային պահանջներ

1. Շարժասանդուղքի փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերենով և ռուսերենով (Պատվիրատուի հետ համաձայնությամբ, անհատական փաստաթղթերը կարող են ունենալ հայերեն կամ ռուսերեն վավերացված թարգմանություն), պետք է տրամադրվեն մատակարարման պայմանագրի պայմաններին համապատասխան:

2. Փաստաթղթերի ամբողջականությունը պետք է համապատասխանի Մատակարարման պայմանագրի պայմաններին և ներառի հետևյալը.

- շարժասանդուղքի հետ մատակարարվող տեխնիկական փաստաթղթերի ցանկը համաձայնեցված Հաճախորդի հետ:

- մեխանիկական և էլեկտրական սարքավորումների շահագործման տեխնիկական նկարագրություն (ՏՆ)՝ էլեկտրական շարժիչի աշխատանքի բոլոր ռեժիմների մանրամասն նկարագրությամբ և շարժասանդուղքի ագրեգատների ընդհանուր տեսարանների գծագրերի ալբոմով:

- շարժասանդուղքների տեղադրման շինարարական առաջադրանք:

- առաջադրանք շարժասանդուղքի էլեկտրամատակարարման համար:

- տեղադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ:

- շարժասանդուղքի ընդունման փորձարկման ծրագիրը և մեթոդաբանությունը:

- էլեկտրական միացման դիագրամ մատակարարված շարժասանդուղքի յուրաքանչյուր տեսակի համար (յուրաքանչյուր թեքության համար), որը ցույց է տալիս շարժասանդուղքի վրա գտնվող բոլոր էլեկտրական սարքերի և դրանց էլեկտրական միացումների տեղադրությունները (3 օրինակ):

- վերանորոգման փաստաթղթեր և շարժասանդուղքների յուրաքանչյուր տեսակի վերանորոգման տեխնիկական գործընթաց՝ նշելով վերանորոգման և սպասարկման հաճախականությունը:

3. Շահագործման փաստաթղթեր:

- յուրաքանչյուր շարժասանդուղքի անձնագիր;

- շահագործման ձեռնարկ;

- պահեստամասերի, գործիքների և պարագաների հաստատված ցանկ:

- գնված ապրանքների անձնագրեր, վկայականներ և գործառնական փաստաթղթեր որոնք շարժասանդուղքի մաս են կազմում (ինչը անհրաժեշտ է ընթացիկ շահագործման համար: յուրաքանչյուր շարժասանդուղքի համար 3 հատ աստիճան , 10 հատ վազկանիկ, մուտքահարթակի սանրիկ '2 լրակազմ, աստիճանի պահեստամասեր և բազրեփոկի շրջադարձային պատ 1 (մեկ) լրակազմ(աջ և ձախ);

• Ապամոնտաժումը, մոնտաժումը, թողարկումը մասնակիցը պետք է իրականացնի ԱՎՕ-ների համապատասխան թույլտվություն ունեցող մասնագետներով:

- Ապամոնտաժված շարժասանդուղքները և նոր մոնտաժվող շարժասանդուղքների բաղկացուցիչ մասերի տեղափոխումը կայարանից դեպի կուտակման վայր կամ հակառակը իրականացնում է մասնակիցը: Տեղափոխման վայրը՝ Արարատյան 87

- Նոր տեղակայված ԱՎՕ-երը պետք է վերագրանցվեն պետական ռեյեստրում և անցնեն համապատասխան փորձաքննություն մինչև շահագործումը (իրականացվում է մասնակցի կողմից):

- Նոր շարժասանդուղքների պահեստամասերը պետք է համափոխարինելի լինեն "Կլեյման" (տեղադրված են "Գործարանային" և "Ս. Դավիթ" կայարաններում) կամ "Դեսենկ" (տեղադրված են "Զ. Անդրանիկ" կայարանում) ֆիրմաների հետ, հետագա շահագործման և պահպանման ծախսերի արդյունավետության նպատակով:

Նոր տեղադրված շարժասանդուղքների երաշխիքը՝ 1 տարի:»:

Փոփոխության հիմնավորում: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)

Էլ. փոստ՝ I.hayrapetyan@promotion.am

Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ